

նակակիցի տեղեկությունները, ըլլան անոնք նոյն իսկ պարզ ակնարկություններ կամ կցկառուր յիշատակություններ: Ակնի մասին Հայ Յիշատակարաններու մէջ կան սա՛ տարիներէն յիշատակություններ. 1340, 1516, 1534, 1545, 1562, 1600, 1640, 1649, 1654, 1655, 1668, 1670, 1675, 1678, 1679, 1682, 1683, եւն եւն: Ասոնք մեզի ծանօթ եղած հնագոյններն են: Ապահովարար մեզի անծանօթ ուրիշներ, գուցէ աւելի հիններ կան: Ըստ այս Յիշատակարաններուն՝ Ակն 1340ին «անառիկ բերդ» մըն է (Հ. Ն. Ակնեան, Հաւաքունն Յիշատակարանաց, Վիեննա, ամ 1340). 1516ին եւ 1534ին Ակն Գիւղ մըն է (անդ՝ ամ 1516, 1534). 1640ին Ակն Գիւղ մըն է, որուն հին անունն է Հերայոլիս (անդ՝ ամ 1640), եւն եւն:

Բացի պատմական-տեղագրական ծանօթություններէ՛ Հայ Յիշատակարանները կուտան ուրիշ շատ մը տեղեկություններ ալ, որոնք գրքիս այլ բաժիններու մէջ կրնային գեղեցկապէս օգտագործուիլ:

Ինչ որ Հայ Յիշատակարաններու համար ըսինք հին շրջանի կապակցութեամբ՝ նոյնը կրնանք ըսել Հայ Մամուլի համար՝ նոր շրջանի կապակցութեամբ: Հայ Մամուլը թանկագին նիւթեր կը բովանդակէ Ակնի տեղագրութեան, բնակչութեան, ժողովուրդի կենցաղին, սովորություններու, կրթական-մշակութային կեանքի, առաջնորդներու, վարչական կազմի, եւն, մասին, որոնց օգտագործումը մեծապէս պիտի նպաստէր երկրի կատարելագոյն զիճակով ներկայացուած ըլլարուն:

Մէկ երկու օրինակ տալու համար յիշենք հետեւեալները.

Մաաիս (1855, Թ. 159) կը պատմէ որ Ակնի Պետրոս Ծ. Վ. ի առաջնորդութեան ժամանակ կամարակապի դպրոցի միւթէվէլիին է Մանկրեան մահտեսի կարապետ, որուն ջանքերով դպրոցը փայլուն շրջան մը կը բուրբէրէ, ուր կ'աւանդուին քրիստոնէական, հայերէն ֆերականութիւն, քուսրանութիւն, երգեցողութիւն եւ գեղեցկագրութիւն:

Ակնէն եղած թղթակցութիւն մը, 1857ին, կ'իմացնէ թէ վիճակին Առաջնորդ Յակոբ Արքայազան մեծ փոյթ կը տանի «վիճակին ժողովրդոցը մէջ ուսման եւ կրթութեան սերտ տարածելու: Ընկերութիւններ հաստատելու, դպրոցները բարեկարգելու» համար (Մաաիս, 1857, Թ. 305):

Այդ առեն Ապուշեխի դպրոցն ունի 50 աշակերտ. կ'ուսանին՝ «Սուրբ Գրոց (Պատմութիւն), Ազգ. Պատմութիւն, Քերականութիւն, Թուարանութիւն եւ վայելչագրութիւն»: Դպրոցին Հողարարձուն է Սուբիաս աղա, իսկ Գլխաւոր դասաւանդ՝ Գրիգոր Երամեան (Անդ):

Ակնի Մշակութ. Ընկերութիւններու մասին տեղեկներ շատ կան, օրինակ՝ Փունջ (1879, Թ. 1387), Մէնմ. Հավատիս, 1872, Թ. 1036), բայց մանաւանդ՝ Աստղաբերդ (1951, Թ. 4, 5-6), ուր մեծ մասով յիշուած են անոնք յատուկ ուսումնասիրութեամբ:

Աւելի քան հետաքրքրական է Փունջի սուսած տեղեկություններ (1879, Թ. 1387) Ակնի Քաղաքական Ժողով ի եւ Արեւելի տուրքներու մասին, ուր կը տեսնուի թէ թշուառ ժողովուրդը ինչպէս կը ճնշուի սուրբերու ծանրութեան տակ:

Վերջացնելու համար՝ յիշենք Ակնի Սովորութիւններէն մին, նկարագրուած Ակնէն՝ Հայկուհի Մ. Ոսկանեանի կողմէ. «Կաղանդի գիշերը նոր հարսը աղբիւր տանիլ. հարսն իւր ամենագեղեցիկ զգեստն հագած եւ կարմիր քօղն իւր դիմաց ածեալ մի պնակ շաքարի ձեռքն ունենալով, յամբաբայլ կը դիմէ աղբիւրը շրջապատեալ յիգական սեռէ: Նախ մի հաց կը քրջէ, ապա պնակին մէջ ունեցած շաքարներն կ'սխի բաժանել բոլոր հանդիսականաց, մեծին եւ փոքրին ձեռներն համբուրելով: Աղօթարանը դեռ չբացուած, կը վերադառնային տուն. յետ այնորիկ նոր հարսն իրաւում կ'ստանայ աղբիւրն երթալու, բայց դեռ ոչ էկեղեցի...» (Արեւել, 1892, Թ. 2436):

Գրքիս վերջին գլուխներէն Տարագրութեանց բաժնի մէջ ակնատեսի ապրումներու բարխուն պատումներ կան, որոնք սրտի ձմրումով կը կարդացուին: Միակ միխթարական կէտը, որ այդ ընթերցումէն վերջ կը մնայ՝ այն է, որ վերագրող Ակնցին, թէեւ թուով փոքր եւ տար աշխարհներու մէջ ցրուած՝ ունի սակայն իր կազմակերպուած Միութիւններն ու Մարմինները, որոնք ամէն տեղ կը ջանան վառ պահել հայրենի տան կրակը, լաւագոյն օր մը անով արծարծելու համար հայրենի տան մարած կրակարանը:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

### Ն Ո Ր Հ Բ Ե Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Ուղարկուած խմբագրութեանս:)

[Յ. Ա.] Հայկական հարցը երէկ եւ այսօր: Հրատարակիչ՝ Յ. Մէքէրեան. Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ. 1946, 8°, էջ 16:

Յակոբեան Ժագ Ս., Կապոյտ աշխարհ երազի քնարավէպ: Մեղրալուսին: Յատարան Նիկոլ Աղբալեանի: Գահիրէ, 1943, 8°, էջ 176:

Յակոբեան Յակոբ, Դաշնակցութիւնը կը վտանգէ դալուծը: Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1948, 8°, էջ 38:

Յովհաննէսեան Յովհան, Կրօնք. Գահիրէ. Ա. գիրք. ա. տպ. չունինք. Բ. տպ. 1940. Գ. գիրք. ա. տպ. չունինք. Գ. տպ. 1940. Գ. գիրք չունինք. Գ. գիրք 1939. Ե. գիրք չունինք:

Յուշագատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890 մինչեւ 1950: Հրատարակութիւն Հ. Յ. Գ. Բիւրոյի: Բոստոն, տպ. Հայրենիքի, 1950, 8°, էջ 636:

Յուշարձան 1915 ապրիլ 24ի: Հաւաքեց ու խմբագրեց Թէոդիկ: Բ. տպ. Աղեքսանդրիա, Հ. Բիւրատ, 1939, 8°, էջ 48: [Ժամանակակից մատենաշար Թ. 69]:

Նալբանդեան Յ., Մեր լեզուն. հայերէն լեզուի դասընթացը: Ա. գիրք. Գահիրէ. 1942. Բ. գիրք. Գահիրէ. 1939. Գ. գիրք. Գահիրէ. 1939. Բ. տպ. 1945. Գ. գիրք. Գահիրէ. 1939. Ե. գիրք. Գահիրէ. 1941.

Նաւասարդեան Վ., Գաղափարների ոգին: Դաշնակցութեան «ապակենտրոնացում» առիթով: Գահիրէ, տպ. Յուսարեթ, 1951, 8°, էջ 230: [Մատենաշար «Յուսարեթ», Թ. 52]: Գինն՝ 50 Կ. Գ.:

Ներդալթողին գրքոյլը: Գահիրէ, տպ. Ոսկետառ: 8°, էջ 16:

Ներսէսեան Սարգիս, Յուրիս տասնընթերցում: Գահիրէ, տպ. Յուսարեթ, 1951, 8°, էջ 230: [Մատենաշար «Յուսարեթ», Թ. 52]: Գինն՝ 50 Կ. Գ.:

Նործադատները Հայաստանի եւ խորհրդային Միութեան մէջ: Հրատարակիչ Յարութիւն Մէքէրեան. Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1945, 8°, էջ 31:

Նեմո Հ. (Արեգեց Հ.), Ռոշնական: Աղեքսանդրիա, 1943, 8°, էջ 216:

[Երջմանեան Յ.] Յովսէփ Շիշմանեան (Ծերենց). [Իր մասին] Ա. Արտիարեանէ, Թ. Չաքարեանէ, Հ. Ասատուրէ: Գահիրէ. տպ. Նոր աստղ. 1946, 8°, էջ 76: [Հրատ. Հայ գրքի բարեկամներու ընկերութեան]:

Երջմանեան Լ., Շատ ապրիս փեսաս: Բարոյալից տրամակառակեղբուրէն Յ աբար: Գահիրէ, տպ. Նեղոս, 1937, 8°, էջ 48:

Երջմանեան Ա., Մատնիչը. վէպ տպ. Ժամանակակից կեանքէ. Աղեքսանդրիա, Հ. Բիւրատ, 1937, 8°, էջ 142: [Ժամանակակից մատենաշար. Թ. 64]: Ո՛վ Հայր...: Գահիրէ, տպ. Նուպար. [1948], էջ 6:

Ոսկերիչեան Հայկագուն Քիւնյ., Ամուսնական իտեյլ կեանքի խորհուրդն ու բանական (սրտիս ըմբէն): Աղեքսանդրիա, տպ. Ա. Ստեփանեան, 1940, 8°, էջ 294: Գինն՝ 40 Կ. Գ.:

— Աստուածատիպ մարզը (խղճիս ըմբէն): Ա. հատոր. Աղեքսանդրիա, տպ. Ա. Ստեփանեան, 1947, 8°, էջ 238: Բ. հատոր. 1948, 8°, էջ 315:

Չագարեան Վ., Հայ «Կրօն»ներ: Գահիրէ 1935—1936, Ա.—Ե. պրակ: Կը պակսի Բ.:

Չարլի Գըրզնի թմբակահար տղան (իրական կեանքէ պատմութիւն մը), Գահիրէ, 1935, 8°, էջ 20:

Չախոյեան Մարտիրոս Յ., Աւարայրի գրուածքը: Թատերգություն հինգ արարուածով: Պոստոն 1951, 8°, էջ 61:

Չէֆիսեան Գեորգ, Առաջերուն տակ...: Բերթոսաններ (1931—1941): Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1942, 8°, էջ 288:

Պալեան Յ., Բեթիլի մը խրատները Հայ պատանիներուն: Գահիրէ, տպ. Նուպար, 1943, 8°, էջ 32: Գինն՝ 3 Կ. Գ.:

Պատարակեան Առաքել, Մեծ նախնորդները: Խորհրդային պատմական հարցեր. Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1942, 8°, էջ 56:

Պարեմեան Պետրոս, «Թուղթ հերքում» թէ Եղծուին ճշմարտութեան, Պէյրութ 1951, 8°, էջ 142: Տպ. Հայ կաթ. Գինն՝ 75 Լ. Գ.:

Պարսեան Սուրէն, Արիւնին մատենար: Գահիրէ 1915, 8°: էջ 155 160 փառուած. ցանկալի է ամբողջ օրինակ մը: